ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

«ՀՈՒՇԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ

ՀՀ Արմավիրի մարզ գ. Հուշակերտ հեռ. 077 064 222
Թիվ 734 << 2 >> սեպտեմբերի 2022թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Է. Հովհաննիսյանին

Հարգարժան պարո՛ն մարզպետ,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հուշակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարել է հայոց լեզվի և գրականության /5ժամ/, դասվարի / 11 ժամ/, կերպարվեստի /5ժամ/, երաժշտության /5 ժամ/ ուսուցչի թափուր տեղի մրցույթ: Կից ներկայացվում է «Հայրենականչ» թերթում տպագրված հայտարարությունը:

Հուշակերտի մ/դ տնօրեն՝ Ս.Ներգարյան

Արմավիրի մարզ գյուղ Հուշակերտ 3 փողոց շենք 1, էլ. հասցե hushakert@schools.am

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ Արմավիրի մարզի «Հուշակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (11 դ/ժ), հայոց լեզվի և գրականության (5 դ/ժ), կերպարվեստի (5դ/ժ), երգ- երաժշտության (5 դ/ժ) ուսուցիչների թափուր տեղերի համար

Ուսուցչի վարձատրությունը՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքներն և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1 /
2. Փաստաթուղթ՝ /դիպլոմ/ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ.
3. Անձնագրի պատճեն
4. Ինքնակենսագրություն /Ձև 5/
5. Մեկ լուսանկար /3x4/ չափի
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք:
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

   Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. սեպտեմբերի 14-ը ներառյալ,ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը կկայանա 2022թ. սեպտեմբերի 19-ին, ժամը՝ 14:00, Հուշակերտի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել 077-064-222 հեռախոսահամարով: